Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
նոյեմբերի 17-ի N 1985 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են կենդանական աշխարհի պետական կադաստրի (այսուհետ՝ պետական կադաստր) տվյալների տրամադրման հետ կապված իրավահարաբերությունները:

2. Պետական կադաստրի մեջ ներառված՝ Հայաստանի Հանրապետության տարածքի վայրի կենդանիների տեսակային բազմազանության (ողնաշարավոր և անողնաշար կենդանիներ), կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման, կենդանական աշխարհի պահպանության և վերարտադրության վերաբերյալ տվյալները տրամադրում է Հայաստանի Հանրապետությունում կենդանական աշխարհի պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական մարմինը (այսուհետ՝ լիազորված մարմին):

3. Պետական կադաստրի տվյալները տրամադրվում են՝

1) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին.

2) Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կամ իրավաբանական անձանց:

4. Պետական կադաստրի տվյալներ ստանալու համար հայտ ներկայացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (այսուհետ՝ հայտատու) տվյալները, ինչպես նաև հայտով պահանջվող տեղեկատվությունը գրանցվում է կենդանական աշխարհի պետական կադաստրի տվյալների տրամադրման փաստաթղթերի գրանցամատյանում:

2. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

5. Պետական կադաստրի տվյալներ ստանալու նպատակով հայտատուն լիազորված մարմին է ներկայացնում հայտ՝ համաձայն N 1 ձևի:

6. Լիազորված մարմինը հայտն ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պահանջվող տվյալները, իսկ մերժման դեպքում՝ գրավոր տեղեկացնում է մերժման պատճառների մասին:

7. Լիազորված մարմինը հայտն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում հայտում թերություններ հայտնաբերելու դեպքում գրավոր տեղեկացնում է հայտատուին՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում վերացնելու լիազորված մարմնի կողմից նշված թերությունները:

3. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

8. Պետական կադաստրի տվյալների տրամադրումը մերժվում է՝

1) «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված դեպքերում.

2) Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով սահմանված բնապահպանական տեղեկատվության տրամադրման սահմանափակումների դեպքերում.

3) սույն կարգի 8-րդ կետով սահմանված ժամկետում հայտատուի կողմից հայտի լրամշակված տարբերակը լիազորված մարմին չներկայացվելու դեպքում.

4) սույն կարգի 3-րդ կետում նշված իրավաբանական կամ ֆիզիկական անձ չհանդիսանալու դեպքում:

4. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9. Եթե պահանջվող տվյալների մի մասը պարունակում է մերժման ենթակա տվյալներ, ապա տվյալներ է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ:

Ձև 1

ՀՀ շրջակա միջավայրի նախարար

_____

(անուն, ազգանուն)

Հ Ա Յ Տ

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը

_____

_____

_____

2. Իրավաբանական կամ ֆիզիկական անձի գտնվելու վայրի կամ բնակության հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն

_____

_____

_____

3. Կենդանական աշխարհի պետական կադաստրից օգտվելու նպատակը /ուսուցողական, գիտահետազոտական, լրատվական, տնտեսական և այլն/

_____

_____

_____

4. Պահանջվող տվյալները

_____

_____

_____

_____

_____ _____

(հայտատուի անունը, ազգանունը) (ստորագրությունը)

____ _____202 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

17.11.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ